

ԴԻԻԱՆ ՍՈՒՐԻ ՅԱԿՈԲԱՅ

ԺԵ

Աստուածատուր Պատրիարք Տառնեցի
Երուսաղէմէն առ Եղիազար Այնթապցի ի Հա-
լեալ (*).

(Իբ իւրիւնս շնորհաւորութիւնս)

Փառք անսկիզբն անսկզբնականին ան-
սկզբանց երիցն ի մի և միումն յերիս եռան-
մնեայ տէրութեանն և եղակի բնութեանն
յաւիտեանս յաւիտենից և անդր քան զամ-
բաւ յաւիտեանս և յաւիտենից յաւիտեանս
և անեղբարական յաւիտեանց՝ ի յանմարմին
հոգեղէն բանական դասուց օրհնեալ և փա-
ռաւորեալ և հոգեղէն մարմնական բանա-
կանացն երկրպագութեամբ օրհնեալ. զով-
եալ և բարեհամբաւեալ գոհացողական սըր-
բասացութիւն մատուցեալ. և և մեք վերջին
նըւաստացեալքս օրհնութիւն, գոհութիւն
հազար և բիւր բերան մատուցանեմք ա-
պենիազ ամենակալին Աստուծոյ, որ սուրբ
տանս և մեզ տառապելոցս վերստին լոյս
ծագեաց և այց արար մեզ և ամենայն հայ-
կազան սեռի և աթոռոց հաստատութեան
նշան երեւցոյց: Որպէս երբեմն ի ժամա-
նակս ժողովրդեանն յարոյց զմեծն Մով-
սէս և ի նորումս յարոյց զսուրբն Գրիգոր
պարթևադինն՝ ժառանգորդ սուրբ առա-
քելոյն Թաղէսի և լուսաւորիչ համայն
ազգի, և այժմ վերջացեալ և վրդովեալ
ժամանակիս գոհութիւն և փառք հազա-
րապատիկ և բիւրապատիկ մատուցանեմք
Գրիստոսի Աստուծոյ մերոյ, որ բարեխո-
սութեամբ սրբուհւոյ ամենօրհնեալ անա-
բատ մօր իւրոյ և կուսի, այլ և բարե-
խոսութեամբ սրբոյ առաքելոյն Յակոբայ
և ամենայն սրբոց մօտանց. որք աստ կան
հաւաքեալ, և աղօթիւք սուրբ Լուսաւոր-
չին որդւոց և թոռանց և աստուածաբան
հայրապետաց և վարդապետաց ամենե-
ցունց միահաղոյն միջնորդութեամբն, որ
և զհրամանքդ բարձրացոյց այդ գերագոյն

և բարձր աստիճան կաթողիկոսութեան,
որ բազմաճիւղ եղեալ աթոռոց զսահմանքն
այժմիկ Աստուծով միաւորեալ միահեծան
գործեցաւ: Փառք և գոհութիւն անօրի-
նողին Գրիստոսի, զոր և հայցեմք ի նոյն
յաստուածապետականէն, որ ի յանդ և ի
կատար տանի: և և տառապեալս հոգեով
և տկարացեալս մարմնով և խաւարեալս
մտօք և մոլորեալ Աստուածատուր սոսկ
անուն վարդապետ կոչեցեալս՝ հանդերձ
սուրբ դատաստանի տանս միաբանու-
թեամբ՝ ձերովք և երիտասարդօք, քա-
հանայիւք և պաշտօնէիւք և բոլոր միա-
բանիւք իւրաքանչիւր կարգի որք կան,
զոր կարգեցեր իւրաքանչիւր կարգի՝ զգու-
շութեամբ կան ի վերայ գործոց, կարգա-
ւորք և պաշտօնեայք ի վերայ սաղմօսից
և պաշտամանց և վերակալոյք ի վերայ
իւրեանց գործոց՝ ի լուսարարէն մինչև ի
դոնապանն՝ ամենեքեանս վեր առ Աս-
տուած գոհանամք, որ զքեզ բարձրացոյց
յաստիճան կաթողիկոսութեան՝ հոգաբար-
ձու սուրբ տանս և ամենայն ազգիս Հա-
յոց: Բայց մեք տառապեալքս՝ թէ՛ կար-
գաւորք և թէ՛ մահակալք սուրբ մօրս
լուսոյ՝ ամենեքեանքս յահի և կասկածի
կայաք յորժամ անջրպետեալ շուկեցեր ի
տեղացս ասելով՝ թէ աճապ ի՞նչ տի գէպի
սուրբ տանս ի յայլառեւոյն վասն անաշ-
բունչ մնալն սորա ի քէն: Ապա գոհու-
թիւն Գրիստոսի, աղօթիւք սուրբ հօրդ
մերում կամք անփորձ և անասան իսուրբ
տունս և ի սմա կայ առեալ պաշտօնեայքս
մինչև ցայժմ, և դադարայն Տեառն եմք
յանձնին: և զնալն հրամանեցդ ի քաղաքդ
յոյժ բարի եղև ըստ առաքելոյն Պետրոսի
և Յովհաննու, զի յորում ժամու մեկնե-
ցան ի սուրբ քաղաքէս զիմով զնալ ի մեծն
յԱնտիօք, յոյժ տարակուսի և տազնապի
կային՝ թէ զի՞նչ լինելոց իցին, ապա Հո-
ղւոյն սրբոյ չնորհին ի վարկեան ժամու
փոյթ ընդ փոյթ ժամանեցին ուր զիմեալն
էին, ըստ նարեկացոյ վարդապետին, թէ
լինի օք զիտուր և սաղտանք բաւում
ունենայ, նոյնպէս և մեք զիտուր եմք
և սաղտանք մեր բազում են, ըստ ա-
ռաքելոյն նարեկացոյն՝ թէ զիտուրն ահ և
կասկած ունի՝ թէ իւր մօտանցն ծայրա-
կուր լինելոց է և տաջի ի շխանին զը-
տանի: Նա՛ յոնկարծակի զինք ազատեալ

(*) Նամակիս ընդօրինակութեան վերնագիրն է.
«Աստուածատուր Վարդապետ Երուսաղէմայ գրեալ էր
ի Հայապ առ Վենն» երբ լուեալ էր Կաթողիկոս ի-
նքնէն:

ի գիտություններն և ստղանացն՝ շնորհիւ Տեառն, և մատուցի իւր զարդարեալ լինի ահանակութեամբ մատանեօք: Նոյն սաւրասի եղև աստուածային օրհնութիւնն և շնորհքն ի վերայ սուրբ տանն և ի վերայ հայկազեան բոլոր սեփիս, և մեղ ևս մեծ աւետեաց լուր և ուրախութեան պարզեւեցաւ, յորժամ լուաք ի ճոխ և վեհափառ բարձր աստիճան հրաւիրելոյ: Այլ աղաչեմք, աղաչեմք, աղաչեմք, զա՛րժ առ մեզ և առ տունս քո, և զօրրացեալքս ի քէն առ քեզ հաւաքեալ:

Դրեցաւ ի դուռն Սուրբ Յակոբայ, Նոյնմբեր ամսոյ Իթ. [1664], օրն հինգշաբթի:

ԺԶ

Կարկուտ Ոնոսիւրիս վրդ. առ Եղիազար կարողիկոս (*).

Պատճառ գրոյս այս է, որ ի թուականութեան հայկազեան տոմարի, հազար հարիւր և յերեքտասան (= 1664) ամի, յամսանն հոկտեմբերի, ի տիրաշէն մայրաքաղաքն յերեւան մեծահանգէս ժողով եղև երջանկափառ վարդապետաց, և որհրահապառիւ եպիսկոպոսաց, որ են այսոքիկ նախ՝ Մովսէս Յովանէս վարդապետն, Միքայէլ վարդապետն, Մեծ Առաքել վարդապետն, Միխիթար վարդապետն, Փոքր Առաքել վարդապետն, Լիւնցի Ստեփաննոս վարդապետն, Երեմիա վարդապետն, Պետրոս վարդապետն, Աւետիս եպիսկոպոսն, Մարգիս եպիսկոպոսն, Դաւիթ եպիսկոպոսըն, Յակոբ եպիսկոպոսն, Դեղարդեցի Ստեփաննոս վարդապետն, Մանուէլ վարդապետն, Դաւիթ վարդապետն, Ղափանցի Բ. Մովսէս վարդապետն, Շամպեցի Յոհան վարդապետն, Ներսէս վարդապետըն, Պօղոտաղ Տէր Ներսէսն, Սուսիկ Յովանէս վարդապետն, Շառիկա առաջնորդն Մովսէս վարդապետն, Մշեցի Դաւիթ վարդապետն, Կողբցի Սարգիս վարդապետն, Փիլիպպոս վարդապետն, Ղափանցի Յո-

վանէս վարդապետն: Բարսեղ վարդապետն: Սոքա ամենեքեան հանդերձ աշակերտօք և վիճակեալք իւրեանց, քահանայաւք և առ ձեռին իւրեանց իշխեցեալ համայն ժողովրդեան հաւանութեամբն համահաւաքեալք ի միասին: Ընդ որս և ևս նուազ ծառայ ծառայից Տեառն Աստուծոյ՝ Ոնոսիւրիս վարդապետս երեւանցի՝ գտեալ եղէ ի միջի նոցին, և ամենեքին սոքա վերոգրեալքս հարկեալ զնուաստութիւնն իմ բանի թղթով եղին երեսփոխան ինքեանց, և առաքեցին զհապանութեան օրինօք հրաւիրակ և յորդորիչ Տեառն եղիազարու սուրբ յերուսաղէմայ աթոռակալի, բազում և պէսպէս աղաչանաց և թախանձանաց բանիւ և գրով, որպէս զի յօժարական հաւանութեամբ զիջցի ըստ նոցա, ի ցուակցութիւն ազատանաց սուրբ աթոռոյն Էջմիածնայ և բոլոր տանն Հայոց, և խոնարհեալ զիմեսցէ ի տեղի ուրեք ի Թէոդուսիոսն կամ ի Թոխաթ և կամ ուրոնօր ինքն կամեցի, և զամենեւեան զնոսա առ ինքն կոչելով՝ նստցի զատաւոր ի միջի նոցա, և արանցէ՝ գտաւրուամբ և արդարութեամբ ըստ յանձնաց հորցն սրբոց և նախնեաց միւրոց, ի մէջ մեր ամենեւեցան և ի մէջ կաթողիկոսի նարդեան ժամօսն: Տեառն Յակոբայ, որ նստի յաթոռ սուրբ Էջմիածնին՝ եւս վստեղութեամբ անուղղայ և անպատշաճ անկարգութեամբ ելլց զտունս Հայոց, զոր ապտանօր կամիմ ի գլուխս բաժանելով բացայայտել սակաւօք: Ընդ որս տհաճ և անկամակ եղևաւ վերագրեալ արքն երեւելիք, կամեցան արդար իրաւամբք և նախ դատաստանաւ դատել զնա, որոց աղաղակ ամբաստանութեանն այս է, զի ամենայն օրէնք և սահմանք բարեկարգութեան հոգեւորն և մարմնաւոր քաղաքավարութեան քնակչաց սուրբ աթոռոյն ներքոյ և արտաքոյ, աստուածային և մարդկային, որ հաստատեալ էր յերանելի արանցն Աստուծոյ՝ ի լուսաւոր հոգի Մովսէս հոգեւորտիւնն և ի Փիլիպպոս կաթողիկոսէն, այն ամենայն եղծեալ ապականացաւ յաւուրս սորին: Երկբորդ՝ զի յայտնապէս զաղանդ քաղկեդոնիկ երկարնակացն ընկալեալ և զնոյն երկարնակ զաւանութիւնն գրով և կնքով իւրով առաքեաց առ պապն Հռոմայ: Երբորդ՝ զի ոչ ըստ կանոնաց սրբոց և սահմանի

(*) Նամակիս ընդօրինակութեան լուսնցիկն վրայ ծածօրագրուած է այսպէս. «Կարկուտ Օնոսիւրիս խաբէրայ ձեռագիրն է, որ կրկին մօզմով խրով կնքեալ կայ ի պանթեսի»:

ազգայն կամի վիճակաւ և հաւանութեամբ ամենայն եկեղեցւոյն ընտրել զյաջորդ սուրբ աթոռոյն, այլ ինքնահաւան անձնահաճութեամբ զճերպոյնսն յետս ընկրկեալ և զեան իմն ունակացեալ, զիւրային մօկաբարոյսն յառաջեցունէ: Չորրորդ՝ զի զչքնաղ և զպայծառ, ազատ և ամենափայլելութեամբ յղփացեալ զսուրբ աթոռն էջմիածնի ի ներքոյ ՌՇ (1500) թուամն պարտոց էարկ, և զօր ըստ օրէ եկեալ հասն և զիրաւունսն վայրածախ շտալլութեամբ կորուսանէ: Հինգերորդ՝ վասն ազահաւան իւրոյ զրկել կամելով զկղթամար և առնուլ զպատուո Նորին կերակրոյ զմերս ևս սեպհական, բազում զիւզս և քաղաքս վիճակաց սուրբ աթոռոյս ետ յափշտակումն նոցին, ընդ նմին և զերկիրն Շումախոյ և Շրուանայ, զոր յաւուրց հողեւորտիրն մինչև ցայսօր սուրբ աթոռոյս էր վիճակ և բաժին, սա վասն ախտի իւրոյ յառաջեցունելոյ, ետ զնոսա կաթողիկոսին Գանձասարոյ առանց կամաց մերոց: Վեցերորդ՝ զի յայտնապէս զկահս և զարդինս սուրբ աթոռոյս՝ եթէ զպաշտելի զսուրբ խաչ և թէ զսկիւն և թէ զանօթ մեռոնի սրոյ և զսմին նման այլ ևս բազմազիւմի անօթս եկեղեցւոյ՝ զսկիւղէն և զարծաթեղէն՝ խորտակեալ և ի քրայս հալոցաց արկեալ, զանունն Բրիստոսի ջնջելով՝ զարպի ալի զրէ: Եւթներորդ՝ զՓիլիպպոս հոգեւորտիրի զամենայն արդիւնս յիշատակացն հետամուտր կորոյս, և զնորին քորողքքի յիշատակարան երկու թուղթսն հատաւ Ութներորդ՝ զի ընդդէմ կանոնաց սրբոց՝ վասն նախանձու և վասն կաշառակութեամբ առհույթեան իւրոյ՝ զեպիսկոպոսունս փոխակերպելով, և ի միում ամի և միոյ աթոռոյ երկիցս ևս երից եպիսկոպոսունս ձեռնադրէ և փոփոխէ զնոսա: Իններորդ՝ զի եւ զվանս նոցին եպիսկոպոսաց կողպտելով՝ զփոխելոց եպիսկոպոսացն կամ թէ զվախճանելոցն զարդիւնսն ամենայն բռնութեամբ առ ինքն ամփոփէ: Տասներորդ՝ զի անխտրաբար զկանամբ եղեալ երկուսնս զոմանս եպիսկոպոս ձեռնադրէ և ոմանց վարդապետական իշխանութիւն տայ: Եւ տասներորդ՝ զի զվարդապետական կարգն զմիանգամ ընկալեալն յայլոց վեհափառ վարդապետացն անընդունակ համարեալ ինքն ամփոփէ: Երկոտասներորդ՝ զի ըզ-

սրբալոյս մեռոնն, որ աւանդեցաւ մեզ յաւուր աւագ հինգշաբթի օրհնել ըստ կանոնաց սրբոց, սա զնոյն արհամարհելով՝ յորում աւուր և կամի՝ ի լուր և ի տէրունի՝ օրհնէ զմեռոնն: Երեքտասներորդ՝ զի զնըւիրակս սրբալոյս մեռոնին կապալատու արարեալ՝ նոքօք զամենայն աշխարհ ձանձրացուցանէ վասն հարկին և զկարգ եկեղեցոյ խանգարէ: Չորեքտասներորդ՝ զի զարս զոհնիկս և աշխարհիկս ի վերայ սուրբ աթոռոյս արդևանցն և պողոյն վերակացու կացուցեալ՝ զլափիլղութենէ նոցին ի տունս իւրեանց ամբարկելոցն անփոյթ առնէ, և այլ ևս աւելիս ինքնին ձեռօք իւրովք ազգատունաց իւրոց ևս եկրօրօրղեացն ցրուէ, նա՛ ևս զնխնիկոս անուն զիւզն, որ բազում ծախիւք ի վերայ սուրբ աթոռոյն սեպհականեալ էր ի սկզբունէ, զնա ևս ի վերայ եկրօրօրղոյն իւրոյ կապալատու արար: Հնգետասներորդ՝ զի բողոք աղաղակի մերում վասն այսպիսեաց՝ թէ ընդէր, ինքն ընդդէմ պատասխանիս բանս անպարկեշտս բարբառեալ աշխարհաբար վարի ասելով՝ թէ չահին հրամանաւ տունս իմ է, ուսեմ և ըմպեմ և առ որմն միզեմ, զի՞ կայ ձեր. զոր ամենեքին մեք գիտակ ևս վկայ եմք, զի ոչ կամօք ևս կտակագրիւ լուսաւոր հոգի Փիլիպպոս հոգեւորտիրին եղև սա կաթողիկոս, և ոչ հաւանութեամբ ամենայն եպիսկոպոսաց և իշխանաց ազգիս, այլ ինքնազլութիւն անձամբ բռնակալեալ տիրապետեաց, և մինչև ցայժմ բռնութեամբ վարելով՝ հոգեւոր իշխանութեամբ ոչ բաւականանայ զպատապարտութիւն եկեղեցականոց, այլ հարկանելով յերկոթս և ի կապանս, մինչ ի՞ ձեռս և ի դատաստանս աշխարհեաց մատնիւ լինի: Վեցտասներորդ՝ զի ստապարծ ևս բաղաոյզ բանիւ պատճառեաց ի զէմս աշխարհի ի սուրբ յերուսաղէմ զնալ ևս զաղտաղղի խորհրդեամբ բարձեալ ընդ ինքեան զնշխար սրբոյն Հովփսիմիայ և Գայլանեայ՝ կամէր տանել յերկիրն Փռանկաց և այնու առնուլ բազում գանձս ի նոցանէ և վալ օժանել զոմն թագաւոր Հայոց ընդդէմ իշխանութեան Պարսից, և ի ժամ զնայից իւրոց զոմն մահմետական . . . անուն հրամանաւ խանին և ձեռագրով կնքոյ իւրոյ ետ նմա արքեպիսկոպոսական հրաման, զի իշխեսցէ ի վերայ վանօրէից

և առաջնորդաց և եկեղեցեաց, կարգաց և կրօնից, չհասի և հասի քննութիւն առնել և հրաման տալ և զանհաւանան ի ձեռս բռնաւորաց մատնել, զոր վաղ ուրիմն ան- յաջողակ մնացեալ խորհրդոյ իւրոյ՝ դար- ձաւ ի Թոխաթոյ, և եղև ուխտադրուծ առ սուրբ յերուսաղէմ, որպէս և պարծէրն անդր ընթանալ։ Եւ թնւտաներորդ՝ Շայ- պանի որդի, ոմն Յովանէս վարդապետ, որ վասն իրիւք ինչ յանցանաց նախնեաց նո- րին ձեռագիր տուեալ էր Փիլիպպոս հոգե- տորաբին նդովիւք և անիծիւք, զի ազգէ յազգ մինչև ի կատարած և ի ծննդոց նո- ցին ոք եպիսկոպոս կամ քահանայ կամ վարդապետ և կամ այլ աստիճանաւոր և ժառանգաւոր եկեղեցւոյ, և զնոյն ձեռա- ղիրն նդովիւք կամէր հոգեւորտէրն կապա- րեայ գրով յեցուլ և հաստատել յորմն սուրբ էջմիածնայ, և զինքն ևս մինչ կենդանին է՝ ոչ թողուլ ելանել արտաքս ի Հաղբակոյ մինչև ցմահ, և թէ ելանէ՝ որոշեալ լինի ի կարգէ աստիճանաց եկեղեցւոյ, և սա ընդդէմ նդովից հոգեւորաբին և ընդդէմ ուխտի ձեռագրոց նորին եհան զնա ի Հաղ- րակոյ և աքսորեաց զԲխիթար վարդապետն յաթոռոյ իւրմէ Տաթևոյ առանց մեղաց իւ- րիւք և առանց պատճառանաց, մինչ զի ժո- ղովորդն ևս իբրև զորդիս որբացեալս ի հօրէ տղաղակէին զկնի նորա, և սա բըւ- նութեամբ աքսորեալ զնա և Շայպանի որ- դւոյն շնորհեաց։ Եւ այլ բանս անկարգս և անուղղայ գործեալ իրս կոյ արարեալ, զոր և հիթանոսական վարուց արտաքոյ մնայ։ Վասն որոյ առ այժմ խնայելով ի լիզուս մեր և ի բանս՝ լռեցաք, և ևս զի մի յայտ- նելով զայն ամենայն՝ զիցուք պայթակղու- թիւն տկարաց, այլ մնացեն այն ամենայն ծածկեալ ի սիրտս և ի միտս մեր, զի ժամ անտնի մեծահանդէս յողովոյն առաջի Տեառն Եղիազուրու եթէ ոչ բաւականացի վերոգրեալքս ամենայն, յայնժամ և զնոսս համանգամայն բանիւ բերանոյ մերոյ ա- ռաջի զիցուք, և այլ և բազում կարգաց ուղղութիւնս խնդրեցուք ի նմանէ։ Այսու ամենայնիւ վերոգրելովքս՝ հարկեալ զիս զմեծփրկոս վարդապետս՝ վէքիլ եղին ին- քեանց և առաքեցին։ Եւ ևս հուան և կա- մակից եղեալ նոցին բանից և յորդորա- նաց, անյապաղ և անդանդաղելի և եկի ի սուրբ յերուսաղէմ, ժամանեալ մարտի ամ-

սոյ ի չորրորդումն աւուր (1665), և զափ զեղիազար վարդապետն կաթուղիկոս և պատրիարք օծեալ ի վերայ նոյն սուրբ ա- թոռոյն ամսօք կանխօք, ընդ որ կարի յոյժ ուրախացեալ, և մի ըստ միովէ զա- մենայն վերոգրեալսն և այլ աւելիս ծա- նուցի նմա, և զայսքանս գրով ետու ի ձե- ռս նորա, և առ նմա եղեալ աւուրք ինչ՝ տեսի զբարեձեւութիւն վարուց և զքաղ- ցրութիւն բարուց և զմարդասէր կամսն և զամենայն բարեք քաղաքավարութիւնսն։ Եւս զի զայսու ժամանակօք սատանայական արկածեօք յարուցեալ ոմն չուն սատակեալ Ղազար անուն զիւական հնարիւք և սա- տանայական խաբերայութեամբ ստապա- տիր կերպիւ տուեալ հրաման յարքունուստ և եկեալ զողորէն եմուտ ի սուրբ յաթոռն յերուսաղէմի, և զհին և զնոր զարդիւնս և զինչս սուրբ տանն կողոպտեալ և ցըր- ուեալ ընդ վայր կորուսանելով, զոմանս բուն պարտատեալց իւրոց, զոմանս հա- մախոհ արքանեկաց իւրոց և զոմանս այ- լաղճեաց շխիւրաց և բռնաւորաց բաժա- նելով՝ զսուրբ տունն քակել և կործանել քննայ, և զիւր ստապատիր գործն յառա- ջացուցանել և հաստատել։ Վասն այսք ամենայնի եթէ զվերոգրեալ պատճառսն որդեամբք ապացուցանելոյ և թէ Եղիա- զար հոգեւորաբի մարդասէր բարուցն և թէ զճառեցեալ զայժմոյ զիպուածոց վըշ- տաց և նեղութեանց սուրբ տանն կարեկ- ցութեան, ևս առաւել վասն իմոյ կամոց և կարեաց արտրժութեան՝ ամենայն յօ- ժարութեամբ իմով հաւանեալ ետու զանձն իմ ի ծառայութիւն կամաց Տեառն Եղիա- զարու կաթուղիկոսին ամենայն Հայոց։ Վասն որոյ զրեցի զայս ձեռագրի ուխտա- գրութիւնս և կնքեցի, զի մինչ ի մահ և ի վճար կենաց իմոց Աստուծով զանձն իմ եղից ի վերայ անձին սորա՝ եթէ ի մահ և եթէ ի կապանս և ի տանջանս. և զա- մենայն ել ևս մուտ կոցից և զնացից իմոց նորին կամու կալ ևս մնալ որքան ի մարմնի եմ, և եթէ ստերիւրեալ խե- ոցիւմ ի սիրոյ նորին ծառայութենէ՝ ընդ ուխտադրուծ ուխտադանցսն կրկեմ ըզդա- տապարտութիւնն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ։

Հրատարակեց՝ Մ. Կ. Ն.